

# ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԱՐԱՍ ԻՍԱԲԷԿԵԱՆ

Արուեստը իր երանդներով աշխարհի ամենէն գեղեցիկ ծիրանի դասին է: Հայ արուեստագէտին ստեղծագործութիւնները աւելի կ'իմաստաւորւին, երբ անոնք կը բարբառին հայութեան դառն ճակատագրին մասին:

Հայրենի տաղանդաւոր գեղանկարիչ Արամ Եղուարզ Իսաբէկեան Հայաստանի հանրաժանութ արուեստագէտներէն է: Ծնած է Երեւան, «Նրկարիչների ընտանիքում», ինչպէս կ'ըսէ ինք. իր բացառիկ տաղանդով դրուած է բարձր գիրքեր: Շրջած է դանազան երկիրներ եւ մասնակցած բազմաթիւ ցուցահանդէսներու, այժմ կը գործէ որպէս դասախօս Երեւանի գեղարուեստաթատերական համալսարանէն ներս, միաժամանակ վարելով նոյն համալսարանի փոխ տնօրէնի պաշտօնը: Ան Հայաստանէն եկած էր Հայէսպ, մաս կազմելով Տէր Զօր ուխտագնացութեան մասնակցող հայրենի պատուիրակութեան: Համազգայինի Նիկոլ Աղբալեան մասնաճիւղի Կերպարուեստի Յանձնախումբը այս բախտաւոր եւ հազուադէպ ստիժը չփախցուց: Արզարեւ, Արշիլ Կորժի գծազարկան արուեստանոցի յանձնախումբը իր գծազարկան արուեստանոցի աշակերտութեան գործերուն ցուցադրութիւնը հազիւ աւարտած, անմիջապէս ձեռնարկեց Արամ Իսաբէկեանի գործերուն նուիրուած այս նոր ցուցահանդէսին:

Հայրենի երիտասարդ գեղանկարիչին անհատական գործերուն բացումը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 7 Մայիս 1991ի երեկոյեան ժամը 7ին, Արամ Մանուկեան Ժողովրդային Տան Լեւոն Շանթ սրահին մէջ, վեց օր տեւողութեամբ:

Արուեստագէտը իր գծազրութիւններէն փոքրիկ փունջ մը ներկայացուց հայէսպահայութեան:

Իսաբէկեան սիրած է բոլոր արուեստները (Երաժշտութիւն, նկարչութիւն, գրականութիւն...), որովհետեւ արուեստագէտը ձուլի նման չի կրնար ապրիլ առանց ջութի, չի կրնար գոյատեւել արուեստներու միջավայրէն դուրս: Արուեստագէտին բոլոր արուեստներն են պէտք, «Եթէ ֆարսապապետութիւնը չսիրէի, ո՞նց կարող էի նրկարել» կ'ըսէ ան:



Ան կը սիրէ նաեւ բնութիւնը, որովհետեւ ամենայրու ստույգին է անիկա «Բնութեան մէջ տգեղութիւններ չկան, հոն ամէն ինչ համապատասխան է ու ներդաշնակ: Կը նկարեմ բնութիւնը, որովհետեւ կը թարմացնէ մեր ուժերը, կը վերացնէ մեզ, որպէսզի նորից անցնես ու փակուես քո ներաշխարհիդ մէջ»:

Փարսուն Միրզոյեան Իսաբէկեանի մասին կ'ըսէ. «Գործերում նկատելի է արտայայտման ե՛ւ այլարանութիւն ե՛ւ գուցորդութիւն ե՛ւ խորհրդանշանութիւն, անոր արուեստի բնոյթը եմքադրում է մտքի ու ոգու ներքին հաստատուն շարժում, մարդու մէջ յայգեր եւ կարեկցանք արթնացնելու ձգտում»:

Հայրենիքի օգով ու ջութով սնած, Սուսիկայիթ ու երկրաշարժ տեսած արուեստագէտը ինչպէ՞ս կրնար անսարքեր դիտող մը ըլլալ, ինչպէ՞ս կրնար յուզական ալեցայտումներու չ'արձագանդել անոր հոգին: Ան վրձնած է գործեր, որոնք յաճախ ներթափանցած են մեր բարդ ու ողբերգական ժամանակներէն ներս: Իսաբէկեան կենդանացուցած է Սեւանի փուչերը, հայրենի քարքարոտ ճանապարհները: Յաճախ խուսափելով կարգ մը պարտաւորութիւններէ, կառած է անկենդան բնութեան: Ապա 87 թուական՝ «Վերածնունդ» Սուսիկայիթ, երկրաշարժ, բոլորը կեանք առած են իր վրձինով:

«Բորեմներու խրախօսանքը» քարշիլի բորեմներ, դեւեր մթութեան մէջ, իրենց ամենայն

սպեկուլյանք խրատածանք սարքած են, ուրախ են իրենց քսամները արարքին ու ապագայի աննախընթաց ծրագրին համար:

Կանոն հայ հեծուորն է փակուած «Կարմիր Սեմեակիմ» մէջ, երբ կան անդին դաշտերը դարար:

Ան մարմնաւորած է եկուորը փրկարար, որուն կը սպասէ նախապաշարուած հայութիւնը:


Պաշտօնեան մինչ ի մահ բաղմած է գահին: Քաղաքը կը ներկայանայ իր ազմուելով ու իրարանցումով:

Կան մարդիկ նաեւ, որ փախուածի կը զիմեն անախորժ մթնոլորտներէ:

Իսաբէկեանի դործերը յատկանշուած են իրենց գոյներով, անոնք անհանդիստ ժամանակներու գոյներ են, անհանդատացնող ու ահաճ, կան նաեւ յուզող ու անհաճոյ պատկերներ՝ խոժոռ դէմքեր, ճաքած հայելիներ, դանկեր, ծուխ ու մուխ:

Հայաստանի իրավիճակը խիստապէս ձեռնթափ կը դարձնէ արուեստագէտները. «Սումկայի՛քը, ո՛չ նկար, ո՛չ նկարչութիւն, ցուցահանդէս չէինք կազմակերպում, դաս էլ չէինք անում»:

Աչքի կը դարնեն նաեւ Իսաբէկեանի մոթիֆները: Ան ներշնչուած է նաեւ Տէր Զօրով: «Բարի Տէր Զօրցին իր շէնդ գգեստներով, յառաջ էր տանում իր հօտը, որքան գեղեցիկ էին դրանք, ներշնչուեցի, քղբի վրայ խճճեցի, սպաւորուեցի,



վաղը յիշողութիւնս կը քարմացնեմ ու ինքնաբուխ դուրս կը գայ»:

Բարի երթ կը մաղթենք Իսաբէկեանի ու իր ընկերակիցներուն: Անոնք իրենց անհանդիստ պատկերներով կը խօսին մեր անհանդիստ սրբտերուն:

Յաջողութիւն նաեւ Համազայինի Կերպարուեստի Յանձնախումբին, մաղթելով անոր անսայթաք յատուկապէս մշակոյթի անդատանէն ներս:

«Մեր փոքրիկներուն մէջ կան քաճուն ձիրքեր, որոնց յայտնաբերման ու զարգացման ծանր է պատասխանատու աշխատանքը վստահուած է յանձնախումբին ուսերուն: Թող արուեստով լիցֆաւորուին տաղանդները. անոնք պէտք է մանչեան վերածնունդը, նկարիչներ, այլ արուեստներ, նոյնիսկ երաժշտութեամբ յամախ ստանան հոգեւոր սնունդ, որովհետեւ արուեստով ու մշակոյթով լիացած կը ծնի ապագայի արուեստագէտը: Կը մնայ գգաստ պահել ժողովուրդը: Ան պէտք է մօտէն շփուի արուեստին հետ այսպիսի ցուցահանդէսները ու անոնց յարատեւումը անբաժանելի պէտք է դառնայ ժողովուրդէն, նոյնիսկ ժողովուրդը պէտք է օժանդակէ անոր բարելաման ու զարգացման», - կ'ըսէ պրն. Իսաբէկեան հրատեչա աննելէ առաջ:

